ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2020թ. մարտի 8ից 12-ը Ժնև (Շվեյցարիայի Համադաշնություն)՝ շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Իրինա Ղափլանյանի գործուղման վերաբերյալ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

   Իրինա Ղափլանյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

   Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ**

   Ժնև (**Շվեյցարիայի Համադաշնություն**)

   2020թ. մարտի 8-ից 12-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

   Կանաչ կլիմայի հիմնադրամ (GCF)

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

Մասնակցություն՝ Կանաչ կլիմայի հիմնադրամի (GCF) ղեկավար խորհրդի 25-րդ հանդիպմանը, ղեկավար խորհրդի հանձնաժողովների, պանելների և խմբերի նիստին, ինչպես նաև խորհրդի աշխատանքային և տեխնիկական նստաշրջաններին:

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ, ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐ**

Կանաչ կլիմայի հիմնադրամի (GCF) ղեկավար խորհրդի 25-րդ հանդիպմանը նախորդող երկրների խմբերիի հանդիպման շրջանակներում քննարկվեցին մի շարք կարևոր հարցեր մասնավորապես.

Օրակարգ 7-րդ կետ (d)-առարկություններ

- Հունվարին, համանախագահողների կողմից կայացվել է 3 որոշում՝ կանոնակարգի համաձայն առանց խորհրդի նիստի անցկացման
- ACUMEN հիմնադրամի ֆինանսական առաջարկի վերաձևակերպման վերաբերյալ որոշումը հաստատվեց առանց առարկության՝ հաստատված ֆինանսական առաջարկին ավելացնելով 1 երկիր

- Գերմանական բանկի ֆինանսական առաջարկի վերաձևակերպումը (ֆինանսական մասով զգալի փոփոխություններ և 2 նոր երկրի ավելացում) առարկության արժանացավ, որոնք ընդունվեցին, սակայն չհանվեցին: Առարկությունները վերաբերում էին հավատարմագրված մարմնի կողմից 19 ա կետով վերաձևակերպման և չեղարկման քաղաքականության մասով իրականացված խորհրդակցությունների բնույթին: Համանախագահողներն լուծումը գտնելու նպատակով աշխատում են անդամների հետ:
- Սեռական շահագործման, սեռական բռնության և ոտնձգությունների քաղաքականության (SEAH) կողմից առարկության արժանացան նաև ա/ գործընկեր կողմերի և բ/ հիմնադրամների գործունեության հետ կապված առաջարկները: Համանախագահներն այս ուղղությամբ ևս տանում են աշխատանքներ՝ խնդրի լուծման նպատակով:

Օրակարգի 10-րդ կետ- Մոնիթորինգի և գնահատման բացերը

- Առաջարկությունները հիմնված են Անկախ գնահատման գրասենյակի անկախ զեկույցի և Պորտֆելի՝ Քարտուղարության կողմից իրականացված ռիսկերի վրա հիմնված գնահատման վրա, որի նպատակն է սահմանել նպատակահարմար լուծումներ Մոնիթորինգի և գնահատման (M&E) բացերի համար:

Օրակարգ 12-րդ կետ (բ). Ծրագրային մոտեցման քաղաքականության ուղեցույցներ

- Քաղաքականությունը հաստատվել է Խորհրդի 14-րդ նիստի ընթացքում, սակայն Խորհուրդն ամեն կերպ փորձում էր ներառել իր փորձը իրավական փաստաթղթի մեջ
- Մինչ այժմ քաղաքականությունը կարգաբերում է ծրագրային հաստատումների փորձը
- Խորհուրդը հաստատել է 27 ծրագիր: Հավատարմագրված կազմակերպությունները հիմնականում բազմակողմ և երկկողմ զարգացման բանկեր են
- Շուրջ 2.4 մլրդ ԱՄՆ դոլար ֆինանսավորումը, կամ ԿԿՀ նախագծային/ծրագրային պարտավորությունների ընդհանուր ծավալի մոտ 46%
- Իրականացման կարգավիճակը հստակեցված չէ, որոշները չունեն հավատարմագրման հիմնական համաձայնագիր (AMA) կամ ֆինանսավորված գործունեության համաձայնագիր (FAA)
- Զգալի հարցեր բարձրաձայնվեցին առարկություն չունենալու վերաբերյալ հայտի գործընթացի մասով

Օրակարգ 9-րդ կետ (բ). Թարմացված ռազմավարական ծրագիր

- Փաստաթուղթը կներկայացվի ոչ ֆորմալ նստաշրջանի ընթացքում
- Ի շահ զարգացող երկրների խմբի, փաստաթղթից հանվել են բոլոր վիճահարույց դրույթները
- Զարգացած երկրներն ունեն վերապահումներ, նրանց հարցերը հանված են

Ցանկալի է, որ փաստաթուղթն ընդունվի այն տեսքով, ինչպիսին որ կա. քննարկվող մոտեցման հիմքում ընկած է այն սկզբունքը, որ լսել մտահոգությունները, բայց տեքստը չներկայացնել նորից մեծածավալ հայեցակարգային փոփոխությունների համար:

- **Ռազմավարական ծրագրի** քննարկումների ընթացքում երկրների խմբերի մի շարք ներկայացուցիչներ առաջ էին մղում «ոչ այլ կերպ, քան մեր համար ընդունելի տարբերակ» գաղափարը, հայտարարելով, որ երբևէ ռազմավարական պլանի լրամշակման մանդատ չի եղել, և անհրաժեշտություն չկա Խորհրդի կողմից այն անցկացնելու: Մինչդեռ, մյուս մասն էլ պնդում էին, որ ստատուս-քվո կարգավիճակը շարունակելու կարիք չկա, և պետք է հաստատել ռազմավարական ծրագիրը: Չիլիի ներկայացուցիչն ընդծեց մի կարևոր կետ, որ ինչպես երկրները պետք է ներկայացնեն իրենց Ազգային մակարդակով սահմանված գործողությունների/ներդրումների (NDC) փաստաթուղթը, այնպես էլ ԿԿՀ-ն վերանայի իր ծրագիրը և ներկայացնի հանրային քննարկման: Ես աջակցեցի այդ առաջարկին:
- Կուբայի կողմից ներկայացված ծրագրային հայտի քաղաքական ասպեկտը կայանում էր նրանում, որ հավանաբար ԱՄՆ-ն դեմ կքվեարկի և կոչ կանի մյուս երկրներին էլ չընդունել այն: Զարգացող երկրների խմբի կողմից ձեռք բերվեց կոնսենսուս՝ նախագծին կողմ քվեարկելու մասով:
- **Ժամկետներ և իրականացման վայրեր**: Ենթադրվում է, որ Խորհրդի 26րդ նիստը Սոնգդոյում չի կայանա, նկատի առնելով հարավային Կորեայում առկա COVID-19-ի բռնկումը:

Ոչ պաշտոնական նստաշրջանի առաջին նիստի օրակարգում կար երկու հարց՝

1. **Վերանայված ռազմավարական ծրագիրը**
2. **Արդյունքների կառավարման շրջանակը և Արդյունքները դիտարկելու գործիքը**

Քննարումներից հատկանշական են հետևյալ հարցերը՝

Ֆրանսիայի ներկայացուցիչն իր մտահոգությունները հայտնեց Խորհրդի 25-րդ նիստը գումարելու առնչությամբ՝ միտք հայտնելով, որ կա մեծ ռիսկ վիրուսի տարածման և յուրաքանչյուր կողմից իր երկիր ներմուծման առնչությամբ: Նա նշեց, որ այս համատեքստում Սոնգդոն ավելի անվտանգ է, քան Ժնևը և անհրաժեշտ էր գնահատել հավաքի պոտենցիալ վտանգը:

Շվեյցարիցայի ներկայացուցիչը նշեց, որ շատ դժվար էր Կառավարությանը համոզել, հանդիպումն հյուրընկալելու համար, սակայն պետք է հստակ գիտակցել նաև Հիմնադրամի մանդատը և կլիմայական ճգնաժամը:

Ռազմավարական Ծրագիրը Խորհրդի 25-րդ հանդիպման ընթացքում ընդունման վերաբերյալ կար համընդհանուր կոնսենսուս, այնուամենայնիվ կային տարաձայնություններ որոշակի հարցերի առնչությամբ: Համանախագահողների

կողմից առաջարկվեց փաստաթուղթ, որն իր նախնական տարբերակի համեմատությամբ զգալի փոփոխությունների էր ենթարկվել Քարտուղարության կողմից: Փոփոխությունների մեծ մասն իրականացվել էին Խորհրդի ոչ ֆորմալ նստաշրջանի ընթացքում և հետո, և վերաբերում էին այն հարցերին, որոնք հանվել էին զարգացող երկրների խմբի կողմից: Դա ակնհայտ էր դառնում նաև Խորհրդի անդամների կողմից փաստաթղթի վերաբերյալ մեկնաբանություններից. Զարգացող երկրները, հիմնականում ընդունում էին, մինչդեռ զարգացած երկրները՝ համաձայն չէին: Ընդհանուր առմամբ իմ կողմից Ծրագրին ծանոթանալուց և երկրների խմբի հետ քննարկելուց հետո մենք կողմ կքվեարկենք դրա ընդունմանը:

Խորհրդի նիստ
Օրակարգի 1-ին կետ

Հանդիպման բացում- Բավականին վիճահարույց քննարկում էր, որտեղ հիմնականում զարգացած երկրները մեղադրում էին համանախագահողներին նիստը գումարելու որոշման համար, մինչդեռ զարգացող երկրների ներկայացուցիչները պաշտպանում էին համանախագահողների դիրքորոշումը՝ նշելով որ հեռավար հանդիպումը Խորհրդի նիստի անցկացման համար նպատակահարմար տարբերակ չէ:

Օրակարգի 4-րդ կետ
Քարտուղարության գործունեության վերաբերյալ հաշվետվություն- Յանիկ Գլենմարեկը ներկայացրեց Քարտուաղրության իրականացրած աշխատանքը: Հաշվետվությունը բավական ծավալուն էր և նա ներկայացրեծ ամոփ զեկույցը: Ըստ իս, նա հիմնականում շեշտադրում էր դրական ասպեկտները, քանի որ դեռևս առկա են լուծում պահանջող մի շարք գործառնական հարցեր՝ ֆինանսական միջոցների հատկացումների, իրականացման ընթացքի տևողության և այլն: Մեզ առնչվող հարցերից մեկը վերաբերում է անձնակազմի աշխարհագրական ներկայացվածությանը՝ 232 հոգուց բաղկացած անձակազմի միայն 18%-ն է Եվրոպայից և ես խնդրեցի տրամադրել տվյալներ արևելյան Եվրոպայից ներկայացվածության վերաբերյալ: Արաբական երկրները և արևելյան Եվրոպան , առավել նվազ են ներկայացված Քարտուղարությունում:

Օրակարգի 7-րդ կետ
Կոմիտեների, խմբերի և պանելների վերանայում
Սա ընթացակարգային որոշում էր՝ հաշվետվության բովանդակությունը կուղարկվի, որի պատասխանն ակնկալվում է մինչև ապրիլի 20-ը: Կարծիք հայտնեցի Խորհրդի մեկ անդամի՝ երկու կոմիտեներում ներկայացված լինելու առնչությամբ, մինչդեռ Խորհրդի մյուս անդամները ընդհանրապես ներկայացված չեն: Պետք է առաջարկել կարգավորում՝ հետագայում նման իրավիճակից խուսափելու նպատակով:

Նստաշրջանի առաջին կեսի ավարտին Խորհրդի մասնակիցներին ողջունեց ՄԱԿ-ում Շվեյցարիայի դեսպանը: Նա նշեց, որ խախտվել է Շվեյցարիայի առողջապահական

մարմինների կողմից հաստատված հրահանգները Խորհրդի նիստի անդամների միջև նստատեղերի հեռավորությունների վերաբերյալ:
Այդ ելույթից հետո հայտարարվեց ընդմիջում, մինչ այդ գումարելով երկրների խմբերի հանդիպում, որտեղ մեզ հայտնեցին, որ անդամների նստատեղերի կարգը փոփոխծության կենթարկվի: Դա խնդիր առաջացրեց, քանի որ անհնար էր տեղավորել Խորհրդի բոլոր անդամներին, այլընտրանքային անդամներին և նրանց խորհրդականներին: Ճաշի ընդմիջումից հետո մոտ երկու ժամ անհրաժեշտ եղավ հարցը լուծելու համար, քանի որ զարգացող երկրների որոշ ներկայացուցիչներ հրաժարվում էին առանձնանալ իրենց խորհրդականներից: Դա կառուցողական մոտեցում չէր, սակյան արդյունքում որոշում կայացվեց որոշ խորհրդականների տեղափոխել և կարգավորել հարցը:

Գործադիր նստաշրջան
Գործադիր նստաշրջանի ընթացքում Յաննիկ Գլենմարեկը ներկայացրեց իրավիճակը Քարտուղարությունում կապված «Կորոնավիրուսի» համաճարակի հետ: Նա անդրադառձավ գործառնական ներուժի անբավարարության պատճառով առաջացած գործառնական և վարքագծային խնդիրներին: Կարծես, կարճաժամկետ խնդիրները այդքան էական չեն, որքան միջնաժամկետները, քանի որ հիմնական անձնակազմը, ճանապարհորդական արգելքներից ելնելով, չի կարող այցելել երկրներ՝ ծրագրերին հետևելու համար:

Նա որպես լուծում առաջարկեց, որ հիմնական անձնակազմի մի մասը, 25-30 աշխատակից տեղափոխվեն այլ վայրեր՝ աշխատանքները լիարժեք կատարելու համար: Դեռևս բաց է այն հարցը, թե որ երկիրը կհյուրընկալի ԿԿՀ անձնակազմին, սակայն առաջարկը ներկայացվեց որպես արտակարգ իրավիճակներում գործելու տարբերակ: Առաջարկ եղավ, այս գաղափարը ևս ներառել Հիմնադրամի քաղաքականության մեջ:

Խորհրդի 25-րդ հանդիպման երկրորդ օրվա ընթացքում տեղի ունեցած երկրների խմբերի հանդիպման ընթացքում քննարկվող հիմնական հարցը ռազմավարության լրամշակված ծրագիրն էր: Կան մի շարք հարցեր, որոնց հետ զարգացած երկրները համաձայն չեն, սակայն հատկանշական է այն, որ երկրների ամբողջ խումբը համակարծիք չէ և օրինակ Ֆրանսիայի և Միացյալ թագավորության մեջ առկա է ամենսաուր տարակարծությունը: Որոշվեց, որ երկու կողմից կստեղծվի աշխատանքային խումբ՝ բանակցությունները խթանելու նպատակով: Հիմնական տարաձայնությունները վերաբերում են հետևյալ հարցերին՝

- ռազմավարական նպատակներ – հատկացումներ,
- ֆինանսական հոսքերի տեղափոխում,
- ծրագրի առաջնահերթություն,
- տարանջատող գործիքներ,
- հավատարմագրման առաջնահերթություն,
- գործընթացների արդյունավետ կառավարում և լիազորությունների պատվիրակում:

Հույս ունենք, որ, չնայած տարաձայնություններին, Խորհրդին կհաջողվի լուծում գտնել և բանակցությունների արդյունքում ընդունել Ծրագիրը, քանի որ դա կլինի կարևոր ազդակ, որ ԿԿՀ-ն, որպես աշխարհի ամենամեծ կլիմայական հիմնադրամ, ևս առաջարկում է՝ ռազմավարական ուղղություններ ճիշտ այնպես, ինչպես այն երկրները, որոնք նախատեսում են այս տարի ներկայացնել իրենց ազգային մակարդակով սահմնված գործողությունների/ներդրումների փաստաթուղթը:

Խորհրդի 25-րդ հանդիպման երկրորդ օրվա հանդիպման առաջին կեսին հաջողվեց ընդունել միայն մեկ որոշում՝ օրակարգի 7-րդ հարցի (դ) կետը, որը վերաբերում էր **Խորհրդի որոշումներին առանց Խորհրդի հանդիպման**: Առավոտյան և կեսօրի նստաշրջանները նվիրված էին ֆինանսավորման առաջարկների քննարկմանը:

Օրակարգի 17-րդ կետ
Ֆինանսավորման առաջարկների քննարկում
Ամփոփ ներկայացվեցին ֆինանսավորվող ծրագրերը: Մեջբերում եմ իմ ելույթները, ինչպես նաև Հայաստանին վերաբերվող կարևոր կետեր: Ամփոփ ներկայացման վերաբերյալ ելույթս՝

«Հարգելի համանախագահող, շնորհակալ եմ ելույթի հնարավորության ընձեռնման համար և թույլ տվեք շնորհակալություն հայտնել Քարտուղարությանը ամփոփ և համապարփակ զեկույցի համար: Նախ և առաջ ցանկալի կլիներ Խորհրդի յուրաքանչյուր հանդիպմանը ներկայացված լիներ ավելի շատ ծրագրային հայտ: Նկատի առնելով ներկայումս մշակման փուլում գտնվող նախագծերի մեծ ծավալը, մենք պետք է ձգտենք ավելի շատ նախագծեր քննարկել Խորհրդի յուրաքանչյուր հանդիպման ընթացքում և ես շնորհակալ կլինեի Քարտուղարությունը այս առնչությամբ մեկնաբանություն տալու համար:
Մենք արդեն խորհրդակցություն ունեցել ենք այս հարցի առնչությամբ և, օգտվելով առիթից, կցանկանայի այստեղ ևս բարձրացնել ծրագրային հայտերի փաթեթում արևելաեվրոպական տարածաշրջանի ներկայացվածության հարցը և մեր կողմից խնդրել յուրաքանչյուր նիստին գոնե մեկ ծրագրային հայտի քննարկման հնարավորության համար:
Ես նաև ցանկանում եմ շնորհակալություն հայտնել Քարտուղարությանը և ներգրավված կողմերին հարմարվողականության վերաբերյալ նախագծերի չափաբաժինը այս փաթեթում մեծացնելու համար:
Ի վերջո, ցանկանում եմ երկրորդել իմ գործընկեր, դեսպան Վեյելի խոսքերը և հարցնել, թե ինչու արդեն երկրորդ իրար հաջորդող նիստերին ցածր արտանետումներով տրանսպորտային ոլորտը ստանում է 0 ֆինանսավորում մյուս ոլորտների համեմատությամբ: Կարծում եմ, որ ի թիվս մյուս զարգացող երկրների, մեր խմբի երկրները ևս ունեն այդ ոլորտում ջերմոցային գազերի արտանետումների կրճատման մեծ ներուժ: Շնորհակալություն:»

Իր պատասխանում Քարտուղարությունը հայտնեց, որ 10 նախապես պլանավորվածներից 3-ը արգելափակվել են Անկախ տեխիկական խորհրդատվական պանելի կողմից, իսկ մեկը՝ վերադարձվել ուղղման:

Ծրագրային փաթեթում կա արևելյան Եվրոպայի 6 երկրի հայտ, 0.3 մլրդ ԱՄՆ դոլար ընդհանուր ֆինանսավորմամբ: Ներկայումս մեր տարածաշրջանից 7 երկիր ընդհանուր ստացել են 0.3 մլրդ ԱՄՆ դոլար ֆինանսավորում:

Քննարկման ներկայացված նախագծերից ընդհանուր դրույթները, որ կարող են օգտակար լինել Հայաստանի համար՝

- ✓ Ուսումնասիրել NEFCO-ի հետ համագործակցության հնարավորությունը
- ✓ Բացահայտել IUCN-ի հետ համագործակցության հնարավորությունը ԿԿՀ ծրագրերով
- ✓ Սովորաբար լայնածավալ նախագծերում ԿԿՀ հատկացումը կազմում է 30-40մլն ԱՄՆ դոլար դրամաշնորհ: Մեր լայնածավալ նախագծերի մշակման ժամանակ (անտառվերականգնում, ջրային ռեսուրսների կառավարում, վաղ ահազանգման համակարգ) պետք է նկատի առնել այն հավատարմագրված միջազգային կազմակերպություններին, որոնք համաֆինանսավորման մեծ ներուժ ունեն:
- ✓ Լայնածավալ գյուղատնտեսական ծրագրերի նախանշում՝ ոռոգման համակարգի և ջրային ռեսուրսների կառավարման կատարելագործման առնչությամբ (առկա է մեր երկրի ծրագրում):
- ✓ Հայաստանի համար կարող է դիտարկվել նաև լայնածավալ նախագծերի հնարավորությունը պելետների կամ բրիկետների արտադրության համար, քանի որ հիմնականում դրանք ֆինանսավորվում են մասնավոր սեկտորի կողմից:

Երկրորդ կարևոր հարցը, որ քննարկվեց դա կազմակերպությունների հավատարմագրումն էր: Ներկայացված էին երեք կազմակերպություն՝

- Շրջակա միջավայրի պահպանության Բութանի Թրաստ հիմնադրամը
- Մոնղոլիայի առևտրի և զարգացման բանկը
- Palli Karma-Sahayak (PKSF) հիմնադրամը (հավատարմագրման թարմացում)

Զարգացած երկրների խումբը առարկեց բոլոր երեքի նկատմամբ, հիմնավորելով, որ հավատարմագրման գործընթացի համար անհրաժեշտ փաստաթղթերը ուղարկվել են մի քանի օր առաջ և նկատի առնելով, որ ժամանակի սղության պատճառով փաստաթղթերը պատշաճ չեն ուսումնասիրվել, հնարավոր չէ հավասարակշռված որոշում կայացնել:

Հասարակական կազմակերպությունները ևս առարկեցին:
Հարցի վերաբերյալ որոշումը հետաձգվեց:

Օրակարգի վերջին հարցը Գործադիր նիստն էր:

Այն ընթացավ առանց վեբ-թողարկման՝ փակ դռների ռեժիմով: Գործադիր տնօրենը ներկայացրեց արտակարգ իրավիճակներում հիմնադրամի գործողությունների ծրագիրը, որը ներառում է 2 բաժին՝ ԿԿՀ անձնակազմի տեղափոխում և Խորհրդի 26-րդ հանդիպում: Հիմնական տարաձայնությունները վերաբերում էին Խորհրդի 26-րդ հանդիպման հեռավար անցկացմանը: Զարգացող երկրներից շատերը դեմ արտահայտվեցին մի քանի պատճառներով՝ երկրների մի մասի՝ տեսահանդիպմանը միանալու հնարավորություն չունենալը, իրավիճակի կառավարման անհնարինությունը և այլն: Իմ դիրքորոշումը վերաբերում էր այս փուլում պլանավորման անհրաժեշտությանը՝ նկատի առնելով այն հանգամանքը, որ իրավիճակը զարգանում է ավելի արագ, քան ենթադրվում էր:

Համաձայնություն ձեռք բերել չհաջողվեց և որևէ որոշում չկայացվեց:
Երրորդ օրվա քննարկման արդյունքում որոշում ընդունվեց Գործադիր տնօրենին հնարավորություն տալ կիրառելու արտակարգ իրավիճակներում գործողությունների ծրագիրը:

<u>ԵՐԿԿՈՂՄ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ</u>

Կանաչ կլիմայական հիմնադրամի (GCF) ղեկավար խորհրդի 25-րդ հանդիպման շրջանակներում երկկողմ հանդիպում ունեցա՝

- ԿԿՀ գործադիր տնօրեն Յաննիք Գլենմարեկի հետ և քննարկեցինք COVID-19-ի հետ կապված իրավիճակը: Քննարկման ժամանակ նա նշեց, որ ՄԱԿ-ի ԿՓՇԿ-ն չեղյալ է հայտարարել Բոննում բոլոր միջոցառումները, քանի որ Գերմանիայում կորոնավիրուսի բռնկման կիզակետը գտնվում է հենց այնտեղ: Կանաչ կլիմայական հիմնադրամի գրասենյակում նույնպես գնալով իրավիճակը վատթարանում էր, քանի որ աշխատակազմի մի մասն աշխատում էր գրասենյակում, իսկ մյուս մաս՝ հեռավար: Քննարկվեց նաև ՀՀ և ԿԿՀ հիմնական համաձայնագրի վավերացման ընթացքը: Իմ կողմից բարձրացվեցին հետևյալ հարցերը.
    - ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության միջոցով ներկայացված նախագծային հայտի քննարկումը հաջորդ 26-րդ հանդիպմանը
    - Հնարավորություն ունենալ խորհրդի յուրաքանչյուր հանդիպմանը քննարկելու մեր տարածաշրջանի առնվազն մեկ նախագծային հայտ
    - Երկրի Ծրագրի շրջանակներում ստանալ Ծրագրի նախապատրաստման օժանդակություն բոլոր երեք խոշոր նախագծերի նախապատրաստման համար:
- Հանդիպել եմ նաև Ազգային աշխարհագրական ընկերության միջազգային հարցերով տնօրեն տիկին Նիկոլ Շվաբի հետ: Քննարկեցինք Հայաստանի և

Ազգային աշխարհագրական ընկերության հետ հնարավոր համագործակցությունը ինչպես հասարակության, այնպես էլ հեռահաղորդակցության ոլորտում: Նա խոստացավ տրամադրել այն նախագծերի և ծրագրերի ցանկը, որոնց Հայաստանը կարող է մասնակցել, ինչպես նաև այն հետազոտողների ցանկը, որոնք կարող են այցելել Հայաստան հետազոտություն անցկացնելու համար:

- **Երկկողմ քննարկում ունեցա նաև NEFCO**- սկանդինավյան ՄՖԿ-ի ներկայացուցիչի հետ Nefco (https://www.nefco.org); Նա շնորհակալություն հայտնեց, որ ես բարձրացրել եմ ցածր արտանետումների տրանսպորտային նախագծերի անբավարար ֆինանսավորման հարցը և ասաց, որ այս թեման մեծ հետաքրքրություն է ներկայացնում ՆԵՖԿՈՅԻ համար: Նա նաև հայտնել է, որ իրենք արդեն աշխատում են Հայաստանի և հիմնականում "Շտիգեն" ՍՊԸ - ի հետ (այն կազմակերպություններից մեկն է, որը ներկա է եղել էլեկտրամոբիլների ներկրողների հետ մեր հանդիպմանը. այժմ նրանք աշխատում են էլեկտրամոբիլային ենթակառուցվածքների լայնածավալ նախագծի մշակման ուղղությամբ): Համաձայնություն ձեռք բերվեց ուսումնասիրել ՆԵՖԿՈՅԻ և Հայաստանի միջև հետագա համագործակցությունը:

Հաշվի առնելով կորոնավիրուսի պատճառով ստեղծված իրավիճակը մի շարք երկկողմ հանդիպումները չեղարկվեցին, քանի որ մասնակիցները չկարողացան ներկա գտնվել ԿԿՀ-ի հանդիպմանը:

Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ

Recoverable Signature

X

ԻՐԻՆԱ ՂԱՓԼԱՆՅԱՆ

Signed by: GHAPLANYAN IRINA 7709830366

Իրինա Ղափլանյան